



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Թումանյան

05/16/2023

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝

<<Հանրապետություն>> խմբակցության անդամներ՝ Արեն Աղաջանյանը, Նիկալ Դալլաքյանը,

<<Քաղաքացիական պայմանագիր >> խմբակցության անդամներ՝ Սեդրակ Գալստյանը, Լյուդմիլա Հովսեփյանը

Քաղաքապետի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ վարչական ղեկավարները, համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության ՀՈԱԿ-ների աշխատակիցները և բնակիչներ.

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Սուրեն Թումանյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Ռուզաննա Շահվերդյանը

Լսեցին

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ջեկ. ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Թումանյան համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը.

1) ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու 2023թ. մայիսի 16-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին

2) Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող <<Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում>> ծրագրի շրջանակներում գործադրվող ՀՀ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման դրամաշնորհային հիմնադրամի միջոցով ՀՀ համայնքներում ՄԱԿ-ի կայուն զարգացման 2030 օրակարգի և կայուն զարգացման նպատակների տեղայնացմանն ուղղված դրամաշնորհային մրցույթին մասնակցելուն և համաֆինանսավորումը ապահովելուն համաձայնություն տալու մասին

- 3) Հողամասը Թումանյան համայնքի սեփականություն ճանաչելու մասին
- 4) Թումանյան համայնքի Ահնիժոր գյուղի 5-րդ փողոցի թվային անվանակոչման մասին
- 5) ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում շարժական կրպակ տեղադրելու և սրճարանային գործունեություն իրականացնելու մասին
- 6) ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի նիստի օրը որոշելու մասին

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 28-Ա/

Լսեցին

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ՝ ՀՀ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ ՀՀ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՄԱԿ-Ի ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2030 ՕՐԱԿԱՐԳԻ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՅՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԱՐՄԱՆ ՄՈՍԻՆՅԱՆ/

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դրույթները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի կարգավորումներով՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ Թումանյան համայնքի մասնակցությանը «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում գործադրվող՝ ՀՀ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման դրամաշնորհային հիմնադրամի միջոցով ՀՀ համայնքներում ՄԱԿ-ի կայուն զարգացման 2030 օրակարգի և կայուն զարգացման նպատակների տեղայնացմանն ուղղված դրամաշնորհային մրցույթին:
2. Համաձայնություն տալ դրամաշնորհային մրցույթին ներկայացվող ծրագրային հայտ-առաջարկի հաստատման դեպքում Թումանյան համայնքի 2023 թ. բյուջեից կատարել համապատասխան համաներդրումը:
3. Թումանյան համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանում կատարել համապատասխան փոփոխություններ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 29-Ա/

Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԸ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԾԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԱՐՄԵՆ ՉՈՓՈՒՐՅԱՆ/

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ և 52-րդ հոդվածներով, ՀՀ Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-18-րդ հոդվածներով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ քաղաքաշինության մասին օրենքով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 29/04/2021թ. թիվ 698-Ն որոշումը և որակավորված «ԻՆՆԵՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված

հողամասի հատակագիծը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հետ կապված անճշտությունների ուղղման համար, Թումանյան համայնքի, Թումանյան քաղաքի, վարչական սահմաններում գտնվող Թումանյան համայնք, ք. Թումանյան, 10-րդ փողոց, թիվ 12 հասցեում, 06-004-0022-0019 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0,02749 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման տնամերձ հողամասի նկատմամբ, քանի որ գոյություն չունեն որևէ իրավունք հաստատող փաստաթղթեր, սեփականաշնորված չէ և այն ՀՀ կառավարության 13/04/2006 թվականի թիվ 719-Ն որոշմամբ փոխանցված չէ համայնքին, առաջնորդվելով ՀՀ կառավարության 29/04/2021թ. թիվ 698-Ն որոշման 4-րդ հոդվածի 39 կետի 1-ին ենթակետի պահանջներով, նշված հողամասի նկատմամբ ճանաչել Թումանյան համայնքի սեփականության իրավունքը:

2. Նշված հողամասը ենթակա է գրանցման Թումանյանի համայնքապետարանի անվամբ:

3. Թույլատրել համայնքի ղեկավարին դիմել ՀՀ ԱԳԿ կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստարաբաժանում, նշված հողամասի համար սեփականության վկայական ստանալու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 30-Ա/

Լսեցին

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՏՈՐ ԳՅՈՒՂԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹՎԱՅԻՆ ԱՆՎԱՆԱԿՈՉՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ՉՈՓՈՒԹԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Թումանյան համայնքի Ահնիձոր գյուղի կադաստրային քարտեզում 5-րդ փողոցն անվանակոչել հետևյալ թվային հաջորդականությամբ.

1) 5-րդ փողոցն սկսվում է 1-ին փողոցից, անցնում է 06-012-0002-0052 ծածկագրի հարավային մասով, 06-012-0002-0050, 0060, 0043 և 0049 ծածկագրերի միջնամասով, 06-012-0002-0047 և 0048 ծածկագրերի միջնամասով, 06-012-0002- 0046 ծածկագրի հարևանությամբ, 06-012-0002-0044 , 0039, 0041 և 0040 ծածկագրերի միջնամասով և վերջանում 06-012-0002- 0042 ծածկագրի հարևանությամբ մինչև հողամասի վերջնամասը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 31-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՇԱՐԺԱԿԱՆ ԿՐՊԱԿ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՍՐՃԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 29-ի « ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի 2023թ. տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափեր սահմանելու մասին» N 87-Ն որոշումը, հաշվի առնելով Դսեղ գյուղի բնակիչներ Արեն Փաշիկի Խառատյանի և Լուսինե Սամվելի Զաքարյանի դիմումները՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն Դսեղ գյուղի բնակիչներ Արեն Փաշիկի Խառատյանին և Լուսինե Սամվելի Զաքարյանին Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող Դսեղ գյուղի, 1-ին փողոցի, Հով. Թումանյանի տուն թանգարանի հարակից տարածքի հողամասում ժամանակավորապես շարժական կրպակ տեղադրելու և սրճարանային գործունեություն իրականացնելու համար:

2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 32-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի նիստի օրը և ժամը սահմանել 2023 թվականի հունիսի 27-ը, ժամը 12:00-ին:

2. Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ ք.Թումանյան, 3-րդ փողոց, Մշակույթի պալատ, 2.2:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 33-Ա/

Թումանյան համայնքի ավագանու նիստին մասնակից ավագանու անդամներ՝

ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ *[Signature]*
 ԲԵԳԼԱՐՅԱՆ ՀՈՎԼԱՆ *[Signature]*
 ԵԳԱՆՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ *[Signature]*
 ԹՈՒՄԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ *[Signature]*
 ԽԱԶԻԿՅԱՆ ԳՈՀԱՐԻԿ *[Signature]*
 ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԱՐԵԿ *[Signature]*
 ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐՈ *[Signature]*
 ՇԱՔԱՐՅԱՆ ՌՈՍԱՆ *[Signature]*
 ՎԱՆՅԱՆ ԴԱՎԻԹ *[Signature]*
 ՎԱՆՅԱՆ ՀՐԱՆՈՒՇ *[Signature]*
 ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՄ *[Signature]*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՆՈՒՄ



ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

[Signature]

ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ